Federal Ministry for Economic Cooperation and Development

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

caritas

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության եւ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի միջեւ

«17» սեպտեմբերի 2020թ.

ք. Գյումրի

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ **«Հայկական Կարիտաս»**), ի դեմս գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանի, մի կողմից, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ **Համալսարան**) ի դեմս ռեկտորի պաշտոնակատար Երվանդ Սերոբյանի, մյուս կողմից (կազմակերպությունները միասին այսուհետ՝ **կողմեր**), կարևորելով Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության ոլորտի զարգացումը եւ կայացումը, հաշվի առնելով Հայկական Կարիտասի կողմից իրականացվող **«Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական եւ համապատասխան որակյալ կրթության կայացմանը»** Ծրագիրը (այսուհետ՝ **Ծրագիր**), որի նպատակն է. *Բոլորի համար, ներառական, համապատասխան և որակյալ կրթության խթանումը Հայաստանում*, կնքում են սույն փոխըմբռնման հուշագիրը՝ հաստատելով իրենց գործողություններն ու աշխատանքները՝

1. <u>Հայկական Կարիտասը պարտավորվում է</u>

- Անցկացնել հանդիպումներ, դասընթացներ ուսանողական խմբերի հետ ներառական կրթության վերաբերյալ՝ նպատակ ունենալով իրազեկել եւ դրական վերաբերմունք ձեւավորել հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ,

- Խրախուսել ներառական կրթության ոլորտում դիպլոմային աշխատանքների եւ ուսումնասիրությունների անցկացումը՝ սահմանելով դրամական մրցանակներ լավագույն աշխատանքների համար,
- Աջակցել ՇՊՀ-ին արտերկրում համագործակից ԲՈՒՀ–եր գտնելու եւ կապեր հաստատելու գործում:

2. <u>ՇՊՀ-ն պարտավորվում է.</u>

- Համագործակցել «Հայկական Կարիտաս»-ի հետ՝ աջակցելով բովանդակային և տեխնիկական հարցերում եւ խրախուսելով ուսանողներին մասնակցել հանդիպումներին, դասընթացներին,
- Համագործակցել «Հայկական Կարիտաս»-ի հետ՝ արտասահմանյան ԲՈՒՀ-եր գտնելու եւ կապեր հաստատելու գործում:

«Հայկական կարիտաս» բարեսիրական կազմակերպության գործադիր տնօրեն՝
Գագիկ Տարասյան՝

(ստորագրություն)

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ժպ՝
Երվանդ Սերոբյան՝

(ստորագրություն)